

Արտապատվիրման տնտեսագիտությունը


Արտապատվիրումն այս դասախոսությունում կիրառում ենք «ձեռնարկության բիզնես գործողության տեղափոխում զարգացող երկիր» իմաստով:

Արտապատվիրումը կարող է կատարվել բիզնես գործողությունը (ա) ձեռնարկության արտերկրյա մասնաճյուղին կամ (բ) արտերկրյա ձեռնարկությանը փոխանցելու միջոցով:


Արտապատվիրումն առնչվում է միջանկյալ ապրանքների համաշխարհային առևտրին: Այնինչ առևտրի դասական մոդելները (Ռիկարդո, Հեքշեր-Օհլին) վերլուծում են վերջնական ապրանքների առևտուրը:

Ապրանքի արժեզրիթան, այսինքն՝ արտադրության ու մարքեթինգի գործողությունների հաջորդականությունը՝ ըստ արտադրական գործընթացի փուլերի, սկսվում է գիտահետազոտական աշխատանքներից, ավարտվում է հետվաճառքային սպասարկումով:

Ապրանքի արժեզրիթան



Բիզնես գործողությունների հաջորդականությունը՝ ըստ աշխատուժի հմտությունների բարդության, սկսվում է հավաքումով, ավարտվում է գիտահետազոտական աշխատանքներով:



Ապրանքի արժեզրիթայի բաղադրիչների արտապատվիրումը կախված է հարաբերական աշխատավարձից ու բիզնեսի վարման ծախսերից.

1. Հարաբերական աշխատավարձ

Զարգացող երկրում աշխատուժի բոլոր խմբերի բացարձակ աշխատավարձը ավելի ցածր է, քան արտապատվիրող երկրում: Բայց բարձր որակավորում ունեցող աշխատուժի հարաբերական աշխատավարձը բարձր է.

$$W_{\text{ցածր}}^* < W_{\text{ցածր}}$$

$$W_{\text{բարձր}}^* < W_{\text{բարձր}}$$

$$W_{\text{ցածր}}^*/W_{\text{բարձր}}^* < W_{\text{ցածր}}/W_{\text{բարձր}}$$

որտեղ ցուցիչներն արտահայտում են ցածր և բարձր որակավորում ունեցող աշխատուժը, իսկ աստղանիշով նշված է զարգացող երկիրը:


2. Բիզնեսի վարման ծախսեր

Կապիտալի ներգրավման, սեփականության իրավունքի պաշտպանության, պայմանագրերի իրագործման, վարչարարության, առևտրի իրականացման (տրանսպորտ, մաքսատուրքեր, կոռուպցիա) ծախսերը զարգացող երկրներում բարձր են:

Հետևաբար՝ զարգացող երկրում իմաստ ունի արտապատվիրել ապրանքի արժեզրկության այն բաղադրիչները, որոնք միաժամանակ և՛ աշխատատար են, և ցածր հմտություններ են պահանջում:

Արժեզրկության α -ից ձախ գործողությունների համար աշխատավարձից խնայողությունը, սովորաբար, գերակշռում է կապտալի ու բիզնեսի վարման հավելյալ ծախսերին: Ուստի՝ այդ գործողությունները հաճախ արտապատվիրվում են զարգացող երկրներում:

Գծանկար 1




Աշխատուժի հարաբերական պահանջարկը վարընթաց է, քանի որ բարձր որակավորմամբ աշխատուժի հարաբերական աշխատավարձի աճին զուգընթաց արտագրողները բարձր որակավորմամբ աշխատուժը փոխարինում են ցածրով:

Աշխատուժի հարաբերական առաջարկը վերընթաց է, քանի որ բարձր որակավորմամբ աշխատուժի հարաբերական աշխատավարձի աճի դեպքում կրթության ոլորտում ներդնել ձգտող անձանց քանակն աճում է:

Բիզնեսի վարման ծախսերի փոփոխության ազդեցությունը արտապատվիրման վրա


Երբ զարգացող երկրում բիզնեսի վարման ծախսերը կրճատվում են, ապա ապրանքի արժեզրկության ավելի մեծ թվով գործողությունների կատարումն արտերկրում դառնում է շահեկան:



α -ից β միջակայքի գործողությունները կսկսեն արտապատվիրվել արտերկրում՝ ի լրումն α -ից ձախ գործողությունների:

Արտապատվիրող երկրում այլևս չկատարվող գործողությունների (α -ից β) պահանջվող հմտությունն ավելի ցածր է, քան դեռևս կատարվող գործողություններինը (β -ից աջ): Ուստի՝ դեռևս կատարվող գործողությունները միջին հաշվով ավելի բարձր որակավորում են պահանջում, քան նախկինում կատարվող բոլոր գործողությունների միջինն էր: Այսինքն՝ ծագման երկրում բարձր որակավորմամբ աշխատուժի հարաբերական պահանջարկն աճում է:

Գծանկար 2



Շեշտենք՝ արտապատվիրող երկրում l' բարձր, l' ցածր որակավորմամբ աշխատուժի բացարձակ պահանջարկը արտապատվիրման ընդլայնման հետևանքով նվազել է: Սակայն՝ բարձր որակավորմամբ աշխատուժի հարաբերական պահանջարկն ընդլայնվել է, ուստի՝ բարձրացել է նաև հարաբերական աշխատավարձը:

Ինչ վերաբերում է զարգացող երկրին, ապա այն բիզնես գործողությունները, որոնք այսուհետ, նույնպես, արտապատվիրվում են այնտեղ (β -ից ձախ), միջինում ավելի բարձր որակավորում են պահանջում, քան նախկինում էր (α -ից ձախ): Այսինքն՝ այնտեղ, նույնպես, բարձր որակավորմամբ աշխատուժի հարաբերական պահանջարկը, և հետևաբար՝ հարաբերական աշխատավարձն աճել են:

Այսպիսով՝ արտապատվիրման հետևանքով բարձր որակավորմամբ աշխատուժի հարաբերական աշխատավարձը և՛ արտապատվիրող, և՛ արտապատվիրվող երկրներում աճում են:

Արտապատվիրումը և բարեկեցությունը

Համարենք՝ արտապատվիրող ձեռնարկությունն իրականացնում է երկու գործողություն՝ բաղադրիչների արտադրություն և գիտահետազոտական աշխատանքներ (ԳԱ): Առաջինում ինտենսիվ կիրառվում է ցածր որակավորմամբ աշխատուժ, իսկ երկրորդում՝ բարձր որակավորմամբ աշխատուժ: Դիցուք այդ երկու գործողություններում կապիտալի ներգրավման ու բիզնեսի վարման ծախսը նույնն է:

Ձեռնարկությունն ունի որոշ քանակի բարձր և ցածր որակավորմամբ աշխատուժ, որոնք կարող են տեղաշարժվել երկու արտադրական գործողությունների միջև:


Ձեռնարկության արտադրական հնարավորությունների սահմանն արտահայտում է արտադրության առավելագույն քանակը՝ աշխատուժի առկա մակարդակի համար:

Հավասարակշռությունը առանց արտապատվիրման: Սկզբնապես ձեռնարկությունը վերջնական ապրանքի թողարկման համար անհրաժեշտ երկու գործողությունները ամբողջովին կատարում է ծագման երկրում:

Հավասարակշռությունը ձևավորվում է իզոքվանտի և ձեռնարկության արտադրական հնարավորությունների սահմանի շոշափման A կետում, որում ձեռնարկությունն արտադրում է վերջնական ապրանքի Y_0 քանակ՝ գիտահետազոտական աշխատանքների ու բաղադրիչների համապատասխանաբար $Q_{ԳԱ}$ և Q_P քանակների կիրառմամբ:

Ընդհանուր շոշափողի թեքությունն արտահայտում է երկու արտադրական գործողությունների ներքին հարաբերական գինը՝ $P_P/P_{ԳԱ}$, նույնն է՝ այդ գործողությունների արտադրման սահմանային ծախսերի հարաբերությունը:

Գծանկար 3




Հավասարակշռությունը արտապատվիրմամբ: Այնուհետև ձեռնարկությունը հնարավորություն է ստանում արտապատվիրել, այսինքն՝ ներմուծել արտադրական գործողությունները:

Քանի որ ցածր որակավորմամբ աշխատուժի հարաբերական աշխատավարձն արտերկրում ցածր է՝ $W_{\text{ցածր}}^*/W_{\text{բարձր}}^* < W_{\text{ցածր}}/W_{\text{բարձր}}$, ապա բաղադրիչների հարաբերական գինն արտերկրում ավելի էժան է՝ $P_p^*/P_{q\text{Ա}}^* < P_p/P_{q\text{Ա}}$:

Արդյունքում՝ երկիրը կներմուծի (կարտապատվիրի) բաղադրիչների արտադրությունը, և միաժամանակ կարտահանի ԳԱ ծառայություններ, որոնց տեղական արտադրության գինը համեմատաբար ցածր է:

Միջազգային հարաբերական գնի ուղիղն ավելի հարթ է, ինչն արտահայտում է բաղադրիչների ավելի ցածր հարաբերական գինը: Ձեռնարկության կողմից կատարվող բիզնես գործողությունների համախումբը A-ից կտեղաշարժվի B (գծ. 4): Միևնույն ժամանակ, ձեռնարկությունը $\tilde{Q}_p - Q_p$ քանակի բաղադրիչների ներմուծման և $\tilde{Q}_{q\text{Ա}} - Q_{q\text{Ա}}$ քանակի ԳԱ-ի արտահանման միջոցով կարտադրի ապրանքի Y_1 քանակ, ինչը գերազանցում է նախկին քանակը:

Գծանկար 4



Այսպիսով՝ ձեռնարկությունը ռեսուրսների (ցածր և բարձր որակավորմամբ աշխատուժի) միևնույն քանակի կիրառմամբ արտապատվիրման շնորհիվ կարողացավ թողարկել վերջնական ապրանքի ավելի մեծ քանակ: Հետևաբար՝ ձեռնարկության արտադրողականությունն աճել է, իսկ արտադրության ծախսերը նվազել են:

Ակնկալելի է, որ վերջնական ապրանքի գինը նույնպես կնվազի, և արտապատվիրումից ձեռնարկության ստացած շահը մասամբ կփոխանցվի սպառողներին:

Առևտրի պայմանների փոփոխությունը


1. Զարգացող երկրում բարելավվում է բաղադրիչների արտադրության արտադրողականությունը և դրանց գինը նվազում է:

Արդյունքում՝ արտապատվիրող երկրի առևտրի պայմանները բարելավվում են, և միջազգային հարաբերական գնի ուղիղը դառնում է ավելի հարթ: Ձեռնարկության կողմից կատարվող գործողությունների համախումբը տեղաշարժվում է D (գծ. 5):

$\tilde{Q}_{\text{գ.Ա.}}$ – $Q_{\text{գ.Ա.}}$ քանակի ԳԱ ծառայություններ արտահանելու և $\tilde{Q}_{\text{բ.}}$ – $Q_{\text{բ.}}$ քանակի բաղադրիչներ արտապատվիրելու միջոցով ձեռնարկությունը E կետում թողարկում է վերջնական ապրանքի Y_2 քանակ:

Արդյունքում՝ վերջնական ապրանքի թողարկումն ընդլայնվում է Y_1 -ից Y_2 , և ձեռնարկությունն արտապատվիրումից էլ ավելի է շահում:


Գծանկար 5



2. Զարգացող երկրում բարելավվում է գիտահետազոտական աշխատանքների արտադրողականությունը, և ԳԱ ծառայությունների գինը նվազում է:

Արդյունքում՝ արտապատվիրող երկրի առևտրի պայմանները (արտահանման գինը հարաբերաժ ներմուծման գնին) վատանում են: Սա այն դեպքն է, երբ օրինակ՝ Զինաստանը համեմատական առավելություն է ձեռք բերում այն արտադրություններում, որոնցում նախկինում համեմատական առավելություն ուներ ԱՄՆ:

Գծանկար 6



Վերջնական ապրանքի թողարկումը նվազում է Y_1 -ից Y_3 (գծ. 6): Սակայն ավտարկիայի հավասարակշռության համեմատ ձեռնարկությունը շահել է (Y_3 մեծ է Y_0 -ից): Այսինքն՝ առևտրից երկիրն ամեն դեպքում շահում է:

Նոր հավասարակշռությունում ձեռնարկությունն արտադրում է M կետին համարժեք ԳԱ ծառայություններ և բաղադրիչներ: Միևնույն ժամանակ, $\tilde{Q}_{qu} - Q_{qu}$ քանակի ԳԱ ծառայություններ արտահանելու և $\tilde{Q}_p - Q_p$ քանակի բաղադրիչներ արտապատվիրելու միջոցով ձեռնարկությունը թողարկում է E կետում Y_3 քանակի վերջնական արտադրանք:

Շեշտենք՝ առևտրից երկիրն ամեն դեպքում շահում է: Միևնույն ժամանակ, ցանկացած առևտրից որոշ ռեսուրսներ շահում են, որոշները տուժում են, բայց շահողները, սովորաբար, շահում են ավելի շատ, քան տուժողները կորցնում են: Ու հետևաբար, առնվազն տեսականում հնարավոր է փոխհատուցել տուժածների կրած վնասը (Կալդոր-Խիքս արդյունավետություն):